

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ЕРЕВАНСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. МОВСЕСА ХОРЕНАЦИ

13.12.2013թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 04/312

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ № 04/312 ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էին գիտ. խորհրդի հետևյալ անդամները՝

1. Աղաբաբյան Արթուր
2. Կարագուլյան Հասմիկ
3. Բարսայան Աշոտ
4. Գալստյան Բակուր
5. Թորոսյան Դավիթ
6. Գրիգորյան Պարզև
7. Հակոբյան Գեորգի
8. Հակոբյան Մամիկոն
9. Սահակյան Աննա
10. Սողոմոնյան Մյասնիկ
11. Քթրյան Գագիկ
12. Նիկողոսյան Արամ
13. Դավթյան Կարինե
14. Այվազյան Հռիփսիմե
15. Ֆրանգուլյան Մերի
16. Սայադյան Քնարիկ
17. Գալստյան Սիմոն
18. Ղարագուլյան Լալա
19. Չոլախյան Հասմիկ

Օրակարգում դրված էր՝

1. Գիտական խորհրդի անդամների փոփոխության հարցը,
2. Բուհի առաքելության վերանայված տարբերակի հաստատումը,
3. Դրամաշնորհը շահելու վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

4. Դրամաշնորհի գնումների վերաբերյալ հանձնաժողովի ստեղծման հարցը,
5. Բուհի վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննություններին ուսանողների առաջադիմության ուսումնասիրման անհրաժեշտությունը,
6. Առանձին ՈԱԿ պաշտոնաթղթի հաստատումը,
7. Ուսանողների և դասախոսների շրջանում հարցումներ անցկացնելու նպատակով հարցաթերթիկների մշակման և ստեղծման հարցը,
8. Սոցիոլոգիական հարցումներ իրականացնելու նպատակով նոր ծրագրի գնման հարցը,
9. Դրամաշնորհի շրջանակներում I եռամսյակի համար նախատեսվող գնումները:

Ելույթ ունեցան՝

1. Գ. Քթրյանը ներկայացրեց, որ խորհրդի անդամ Գալստյան Օլյան ազատվել է աշխատանքից և խորհրդում առաջացել է թափուր տեղ և անհրաժեշտ է ներկայացնել նոր անդամի թեկնածություն: Ա. Աղաբաբյանը առաջարկեց Մնացականյան Լիլիթի թեկնածությունը:
2. Գ. Քթրյանը նշեց բուհի առաքելության վերանայման անհրաժեշտությունը և ներկայացրեց Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված առաքելության վերանայված տարբերակը:
3. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը տեղեկացրեց, որ ԵՄԽՆ-ն շահել է դրամաշնորհ բուհում որակի ապահովման գործընթացը բարելավելու նպատակով և համառոտ ներկայացրեց դրամաշնորհի շրջանակներում նախատեսվող գործողությունները և դրանց կատարման ժամանակահատվածը:
4. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը առաջարկեց ստեղծել դրամաշնորհով նախատեսվող գնումների վերաբերյալ 2 տիպի հանձնաժողով՝ գույքի, համակարգչային տեխնիկայի, տպագրության և գրենական պիտույքների գնման հանձնաժողով և խորհրդատվական ծառայությունների գնման հանձնաժողով:
5. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննություններին ուսանողների առաջադիմության վերաբերյալ հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը և առաջարկեց հանձնարարել ՈԱԿ-ին իրականացնել այդ հետազոտությունը:
6. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը ներկայացրեց ՈԱԿ-ի մշակված պաշտոնաթուղթը:

7. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը ներկայացրեց բուհում սոցիոլոգիական հարցումներ անցկացնելու անհրաժեշտությունը՝ մասնավորապես առաջարկեց դասախոսների և ուսանողների շրջանում հարցումներ անցկացնելու նպատակով մշակել և ստեղծել հարցաթերթիկներ:
8. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը առաջարկեց հարցումների հարցաթերթիկների կազմման և մատչելի իրականացման համար գնել էլեկտրոնային ծրագիր՝ մասնավորապես առաջարկեց գնել Question Pro ծրագիրը:
9. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց դրամաշնորհի շրջանակներում I եռամսյակում նախատեսվող գործողությունները (մինչև 22.02.2014) և այդ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ գումարների ցանկը:

Որոշեցին՝

1. Գիտական խորհրդի կազմում ընդգրկել Մնացականյան Լիլիթին,
2. Հաստատել բուհի առաքելության վերանայված տարբերակը,
3. Դրամաշնորհի գումարների վերաբերյալ ստեղծել 2 տիպի հանձնաժողով՝
 - ԵՄԽՀ-ի գույքի, համակարգչային տեխնիկայի, տպագրության և գրենական պիտույքների գնման հանձնաժողով, որի նախագահ նշանակել Ա.Աղաբաբյանին, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկել Գ. Քթրյանին, Մ. Հակոբյանին, Կ. Գասպարյանին, Տ. Սարգսյանին, Կ. Սարգսյանին,
 - ԵՄԽՀ-ի խորհրդատվական ծառայությունների գնման հանձնաժողով, որի նախագահ նշանակել Ա. Աղաբաբյանին, հանձնաժողովի քարտուղար նշանակել Կ. Սարգսյանին, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկել Գ. Քթրյանին, Լ. Մնացականյանին և Կ. Սարգսյանին:
4. Հանձնարարել ՈԱԿ-ին կատարել հետազոտություն վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննություններին ուսանողների առաջադիմության վերաբերյալ և տրամդրել վիճակագրական տվյալներ:
5. Հաստատել ՈԱԿ-ի պաշտոնաթուղթը:
6. Դասախոսների և ուսանողների շրջանում հարցումներ անցկացնելու նպատակով մշակել և ստեղծել հարցաթերթիկներ:
7. Սոցիոլոգիական հարցումների նպատակով գնել Question Pro ծրագիրը:
8. I եռամսյակում իրականացնել գումարներ հետևյալ չափով՝

Կահույք- 569.700 (հինգ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր ՀՀ դրամ),

Համակարգչային սարքավորումներ- 1.153.000 (մեկ միլիոն հարյուր հիսուներեք հազար ՀՀ դրամ),

Գրենական պիտույքներ- 45.760 (քառասունհինգ հազար յոթ հարյուր ՀՀ դրամ),

ՈԱԿ անձնակզմի օտար լեզվի վերապատրաստման համար – 360.000 (երեք հարյուր վաթսուն հազար ՀՀ դրամ):

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Աղաբաբյան

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՂԱՐ՝

Հ. Կարազուլյան